

Հ Ա Յ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Երևանի քաղաքապետարանի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների) կազմակերպման և անցկացման հանձնաժողովը հայտարարում է համայնքային սեփականություն համարվող ներքոհիշյալ հողամասերի աճուրդ

№	Հողամասի հասցեն /գտնվելու վայրը/ տարածազնահատման գոտին	Ծածկագիրը	Մակերեսը /քմ/	Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը	Հողամասի օգտագործման նպատակը	Մեկնարկային գինը /ՀՀ դրամ/
Աջափնյակ վարչական շրջան						
1	Մազմանյան փողոց 1/10 (7-րդ գոտի)	Ա2020/27	216.17	Բնակավայրերի հող	Հասարակական նշանակության օբյեկտի կառուցման համար	8,646,800
Ավան վարչական շրջան						
2	Ռուբինյանց փողոց 60 (6-րդ գոտի)	Ա2020/15	499.06	Բնակավայրերի հող	Հասարակական նշանակության օբյեկտի կառուցման համար	27,448,300
Նոր Նորք վարչական շրջան						
3	Մոլդովական փող. հ.39/29 (7-րդ գոտի)	Ա 2019/114	276.95	Բնակավայրերի հող	Բնակելի կառուցապատման համար	10,524,000
4	Բակունցի փող. հ.11/6 (7-րդ գոտի)	Ա 2020/07	42.28	Բնակավայրերի հող	Հասարակական նշանակության օբյեկտի կառուցման համար	4,650,000
5	Մինսկի փողոց 50 (7-րդ գոտի)	Ա2020/30	76.50	Բնակավայրերի հող	Հասարակական նշանակության օբյեկտի կառուցման համար	1,683,000
Դավթաշեն վարչական շրջան						
6	Աղաբաբյան փողոց 2/5 (7-րդ գոտի)	Ա2020/29	416.34	Բնակավայրերի հող	Հասարակական նշանակության օբյեկտի կառուցման համար	33,307,200
7	Աղաբաբյան փողոց 2/4 (7-րդ գոտի)	Ա2020/28	389.07	Բնակավայրերի հող	Հասարակական նշանակության օբյեկտի կառուցման համար	31,125,600
Արաբկիր վարչական շրջան						
8	Բաբայան փող. հ.15/1 (4-րդ գոտի)	Ա 2019/124	302.03	Բնակավայրերի հող	Հասարակական նշանակության օբյեկտի կառուցման համար	33,000,000
Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան						
9	Գուսան Շերամի փող. 84/1 (8-րդ գոտի)	Ա 2020/05	323.68	Բնակավայրերի հող	Հասարակական նշանակության օբյեկտի կառուցման համար	9,710,000

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ www.yerevan.am: Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան բոլոր աշխատանքային օրերին ժամը 09:00-ից մինչև 16:00-ը (Արգիշտիի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 011 514 173): Աճուրդին մասնակցել ցանկացող ֆիզիկական անձինք հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10,000 (հ/հ 900015211403) դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը (հ/հ 900015211411), անձնագրի, իսկ իրավաբանական անձինք կանոնադրության և պետական ռեգիստրի վկայականի պատճենը:

Աճուրդը կայանալու է 2020 թվականի **հուլիսի 3-ին-ին**, ք. Երևան, Արգիշտիի 1 հասցեում: Հայտերն ընդունվում են բոլոր աշխատանքային օրերին ժամը 09:00-ից մինչև 16:00-ը մինչև 2020 թվականի **հուլիսի 1-ը ներառյալ**:

Երևանի քաղաքապետարանի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների կազմակերպման և անցկացման հանձնաժողովը